ՀԱՇՏԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Որակավորված արդյունաբերական գոտիներ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ազդակ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Թաֆթս Համալսարան, Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոց,ԱՄՆ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի և Թուրքիայի մասնակցությամբ որակավորված արդյունաբերական գոտիների (Qualified Induestrial Zones, ՈԱԳ) ստեղծման և զարգացման իրավական, քաղաքական և տնտեսական ասպեկտները: Նման հատուկ տարածքների գոյությունը, որտեղ տեղակայված ընկերությունները համապատասխան ապրանքատեսակներ են արտադրում և առանց մաքսատուրքերի արտահանում են ԱՄՆ շուկա, կարող են խթանել առևտրատնտեսական զարգացումն ու մասնակից երկրների միջև առկա քաղաքական խնդիրների լուծումը: Որպես օրինակ, հոդվածում քննարկվում է ԱՄՆ-Հորդանան-Իսրայել և ԱՄՆ-Եգիպտոս-Իսրայել ՈԱԳ-ների փորձը, վերլուծվում է, թե արդյո՞ք այս նախադեպերը կարող են արդյունավետ մոդել ծառայել Հայաստանի և Թուրքիայի համար՝ տարածաշրջանային տնտեսական համագործակցության միջոցով երկկողմ հարաբերությունների կարգավորումը խթանելու համար:

Բանալի բառեր

Հայ-թուրքական հարաբերություններ, որակավորված արդյունաբերական գոտիներ, բանակցություններ

Նախաբան

Հարավային Կովկասում և սևծովյան տարածաշրջանում առկա խնդիրները բավական բարդ են և խոր արմատներ ունեն: Դրանց մի մասը ծագել է 1990-ականների սկզբին՝ երկբևեռ աշխարակարգի փլուզման և նոր աշխարհակարգի ձևավորման արդյունքում: Դրանք պատմական վեճեր են, տարածքային հակամարտություններ, ինքնորոշման իրավունքի իրացման փորձեր և այլ հիմնախնդիրներ, որոնց չլուծված լինելը խանգարում է տարածաշրջանի կայուն զարգացմանն ու փոխշահավետ համագործակցությանը: Այդ առումով, վեճերի լուծմանը նպաստող այլընտրանքային մեխանիզմները, օրինակ տնտեսական համագործակցությունը, հնարավորություն է տալիս նոր մոտեցում ձևավորել հակամարտությունների կարգավորման և

լուծման համար: Միջազգային պրակտիկայում բիզնեսի և ներդրումների միջոցով հաշտեցման և զարգացման գաղափարը նոր չէ: Այդ կապակցությամբ նման համագործակցության իրավական բաղադրիչը կարևոր է դառնում պայմանավորվածությունների արդյունավետ իրականացման համար:[1]

Պետությունների միջև տնտեսական համագործակցության միջոցով երկկողմ հարաբերությունների խթանման կարևոր գործոններից է ազատ առևտրի համաձայնագրերի առկայությունը: Ժամանակի ընթացքում լայն տարածում է գտել նաև կողմերի միջև ազատ առևտրի համաձայնագրերի ստորագրումը: Կարելի է ենթադրել, որ ազատ առևտուրը նպաստում է կողմերի բարգավաճմանը, ուստի, զարգացման տեսության մեջ ազատ առևտուրը համարվում է տնտեսական զարգացման կարևոր տարր՝ մասնավորապես աղքատ երկրների համար:[2]

Վերջին տասնամյակում հայ-թուրքական հարաբերություններում աննախադեպ զարգացումներ տեղի ունեցան, որոնք մեծ ուշադրության արժանացան: Չնայած երկու պետությունների խորհրդարաններն այդպես էլ չվավերացրեցին 2009թ. հոկտեմբերին Ցյուրիխում նախաստորագրված արձանագրությունները՝ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, այդուհանդերձ դրանք դերակատարություն ունեցան տարածաշրջանում իրողությունների ընկալման առումով:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի և Թուրքիայի մասնակցությամբ որակավորված արդյունաբերական գոտիների ստեղծման և զարգացման իրավական, քաղաքական և տնտեսական ասպեկտները: ՈԱԳ-երը հատուկ տարածքներ են, որտեղ տեղակայված ընկերությունների արտադրած ապրանքատեսակներն առանց մաքսատուքերի արտահանվում են ԱՄՆ շուկա: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է ԱՄՆ-Հորդանան-Իսրայել և

[1] **Strauss A. L,** From Gattzilla to the Green Giant: Winning the Environmental Battle for the Soul of the World Trade Organization, *University of Pennsylvania Journal of International Economic Law,* 1998, 19, 769-821.

[2] **Spriggs W. E., Stanford J**., Economists' Assessments of the Likely Employment and Wage Effects of the North American Free Trade Agreement, *Hofstra Labor Law Journal,* 1993, 10, 495-536;

ԱՄՆ-Եգիպտոս-Իսրայել ՈԱԳ-ների փորձը: Կվերլուծվի, թե արդյո՞ք այս նախադեպերը կարող են Հայաստանի և Թուրքիայի համար ծառայել որպես արդյունավետ մոդել տարածաշրջանային տնտեսական համագործակցության միջոցով երկկողմ հարաբերությունների կարգավորմանը նպաստելու համար: Տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումների լույսի ներքո դա կարող է դիտարկվել որպես վեճերի լուծումը խթանող այլընտրանքային տարբերակ:

ՈԱԳ-ների ծագումն ու միջազգային փորձը

Որակավորված արդյունաբերական գոտիները աշխարհագրական տարածքներ են, որտեղ տեղակայված ընկերությունների արտադրած ապրանքները մտնում են ԱՄՆ շուկա առանց տուրքերի: Այս աննախադեպ նախագիծը ստեղծվել է Իսրայել-Եգիպտոս և Իսրայել-Հորդանան հարաբերությունները կարգավորելու նպատակով: Որակավորված արդյունաբերական գոտու հայեցակարգը նախաձեռնվել է 1996թ. Քլինթոնի վարչակազմի կողմից՝ տարածաշրջանային տնտեսական համագործակցության միջոցով Մերձավոր Արևելքում խաղաղության և կայունության ամրապնդման նպատակով, որը կարող էր նպաստել թշնամաբար տրամադրված արաբական երկրների և Իսրայելի համագործակցությանը: Այդ նպատակով ԱՄՆ վարչակազմը թույլ է տվել ԱՄՆ-ի շուկա մուտք գործել 1999թ. ի վեր Հորդանանի և 2004 թվականից ի վեր Եգիպտոսի տարածքում Իսրայելի հետ համատեղ արտադրված ապրանքատեսակները: Իսրայելի համար չափազանց կարևոր էր բարիդրացիական հարաբերություններ ունենալ արաբական և իսլամական մի քանի պետությունների հետ, աշխարհին ապացուցելու համար, որ իր պայքարը իսլամական և արաբական աշխարհի դեմ չէ: Այս առումով Եգիպտոսի և Հորդանանի հետ հարաբերությունների բարելավումը լավագույնս կարող էր օգտագործել Իսրայելը՝ որպես այդ ընկալումը հավաստող փաստ:

1996թ. Իսրայելի և Հորդանանի միջև ստորագրվեց պատմական մի համաձայնագիր, որի առաջին հոդվածը նշում էր. «Համաձայն Միացյալ Նահանգների և Իսրայելի ազատ առևտրի գոտու մասին 1985 թվականի համաձայնագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահի 6955 հրամանագրի, Հորդանանի Հաշեմիթյան Թագավո-

ության և Իսրայելի պետության կառավարությունները համաձայնում են Որակավորված արդյունաբերական գոտի ստեղծել և խնդրում են, որ Միացյալ Նահանգների կառավարությունը այն ճանաչի որպես այդպիսին»[3]:

Համաձայնագիրն ուժի մեջ մտավ 1998 թվականի մարտի 13-ին՝ անհրաժեշտ իրավական ընթացակարգերի ավարտից հետո:[4] Այս համաձայնագրով Իսրայելի պետությունը և Հորդանանի Թագավորությունը համաձայնեցին Հորդանանի տարածքում որակավորված արդյունաբերական գոտի ստեղծել: ԱՄՆ կողմից նախագծի հաստատումից հետո այն թույլ է տալիս առանց մաքսատուրքերի Իսրայելի և Հորդանանի համատեղ արտադրած ապրանքները ներմուծել ԱՄՆ շուկա: ԱՄՆ-ն շահագրգռվածություն էր հայտնել աջակցել Մերձավոր Արևելքում խաղաղության գործընթացին, և տարածաշրջանի զարգացումը կարող էր նպաստել խաղաղության հաստատմանը: Ըստ Իբրահիմ Սայիֆի, ՈԱԳ-ի ստեղծումը տարածաշրջանում տնտեսական ինտեգրման միջոցով խաղաղության հաստատման լավագույն ձևն է:[5]

Ըստ Համաձայնագրի, Հորդանանի և Իսրայելի արտադրողներից յուրաքանչյուրը կատարում էր նվազագույնը 35% ներդրում և Միացյալ Նահանգները առանց մաքսատուրքերի ներմուծում էին համապատասխան ապրանքատեսակներ:[6] Հետագայում Հորդանանի ջանքերի արդյունքում, նվազագույնը 35% ներդրում պահանջող տոկոսների հարաբերակցությունը փոխվել է հետևյալ կերպ.

1. ՈԱԳ-ում գտնվող արտադրողի կողմից՝ նվազագույնը 11.7%,

2. Իսրայելից՝ առնվազն 8% բոլոր ապրանքների համար (7% բարձր տեխնոլոգիական ապրանքներ), 15.3% պետք է ներդրվի Հորդանանի, Իսրայելի, ԱՄՆ և Գազայի հատվածի կողմից: Տասը

---

[3] Agreement between the Hashemite Kingdom of Jordan And Israel On Qualifying Industrial Zone, http://www.agreements.jedco.gov.jo/qiz.html (20.10.2016).

[4] Նույն տեղում:

[5] **Ibrahim S**., The Socio-Economic Implications of the Qualified Industrial Zones in Jordan, Center for Strategic Studies, University of Jordan, 2006, https://www.files.ethz.ch/isn/139049/62.pdf (20.11.2016).

[6] About QIZ, Ministry of Trade and Industry of Egypt, Official site, http://www.qizegypt.gov.eg/About_QIZ.aspx (14.09.2016).

տարիների ընթացքում որակավորված արդյունաբերական գոտիները հանգեցրին մի շարք առավելությունների, ինչպիսիք են.

- Հորդանանից ԱՄՆ արտահանումը 1997թ. աճեց 7.9 միլիոնից մինչև 2004թ.-ին՝ ավելի քան 1 միլիարդ դոլար:[7]
- Հորդանանի ՈԱԳ-ների աշխատուժի աճը երկրի զարգացման շարժիչ ուժն է: Հորդանանի տվյալներով ՈԱԳ-ներում ստեղծվել է ավելի քան 40,000 աշխատատեղ: Ներդրումները Հորդանանի ՈԱԳ-ում ներկայումս կազմում են 85-100 մլն դոլար և ակնկալվում է աճ մինչև 180-200 մլն:[8]
- ՈԱԳ-ների ստեղծումից հետո, Միացյալ Նահանգները և Հորդանանը բանակցեցին լիարժեք ազատ առևտրի համաձայնագիր կնքելու նպատակով, որը ԱՄՆ Կոնգրեսը հաստատեց 2001 թվականին:

Դիտարկելով Իսրայելի և Հորդանանի միջև ՈԱԳ-ի համաձայնագրի դրական տնտեսական արդյունքները, տեքստիլի քանակական քվոտաների սպառնալիքը եգիպտական տեքստիլի միջազգային մրցունակության համար և պատրաստի հագուստի արդյունաբերությունը, Եգիպտոսի կառավարությունը որոշեց բանակցել ՈԱԳ-ի համաձայնագրի վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրվեց 2004թ. դեկտեմբերի 24-ին Կահիրեում և ուժի մեջ է մտավ 2005 թվականի փետրվարին:

Դրական անմիջական արդյունքն ակնհայտ էր: Եթե Իսրայելը 2004 թվականին Եգիպտոս էր արտահանել 29 միլիոն դոլարի արտադրանք, ապա 2005 թվականին այն հասավ 93.2 միլիոն դոլարի՝ աճելով մոտ 300 տոկոսով:[9] 2006թ. ընթացքում Իսրայելից Եգիպտոս արտահանան ընդհանուր ծավալը շարունակում է աճել և գերազանցել է 125 միլիոն դոլարը: Ընդհանուր առմամբ Եգիպտոսի արտահանումը ԱՄՆ,

---

[7] **Ibrahim S**., նշվ.աշխ.:

[8] Նույն տեղում:

[9] Israel-Egypt Relations: Overview of Bilateral Cooperation, Jewish Virtual Library, a project of The American-Israeli Cooperative Enterprise (AICE), http://www.jewishvirtuallibrary.org/overview-of-israel-egypt-cooperation (20.11.2016).

որը 2004թ. կազմել է 1,793 միլիոն դոլար, 2015թ. հատել է 3 միլիարդ դոլարի շեմը և շարունակում է աճել:[10]

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Իրավիճակից ելքի ռազմավարության անհրաժեշտությունը

Հայ-թուրքական հարաբերությունները կարելի է բնութագրել որպես թշնամական, զուգորդվող գլոբալ անվստահությամբ և լարվածությամբ՝ կապված մի շարք չլուծված խնդիրների հետ: Դրանցից առաջինը Հայոց ցեղասպանությունն է, թուրքական մերժողականությունը, կառավարության կողմից հետապնդումները այն թուրքերի նկատմամբ, ովքեր բացեիբաց խոսել են այդ հարցի մասին:[11] 1993թ. հարաբերությունները կրկին վատացան, երբ Թուրքիան Հայաստանի հետ սահմանը փակեց՝ ի աջակցություն իր դաշնակից Ադրբեջանի, բացումը պայմանավորելով Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում Հայաստանի զիջումներով:[12] Հայաստանի և Թուրքիայի միջև լարվածությունը, առավել խորացավ Հայաստանի շրջափակման և Հայաստանը շրջանցող տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերի իրականացումից հետո, ինչպիսիք են՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Կարս[13] երկաթուղին, ինչպես նաև Հայաստանի ատոմակայանի

---

[10] Trade in Goods with Egypt, United States Census Bureau, https://www.census.gov/foreign-trade/balance/c7290.html (20.11.2016).

[11] Turkey: Article 301 is a Threat to Freedom of Expression and must be repealed now, Public Statement, Amnesty International, December 1, 2005, http://www.amnestyusa.org/document.php?lang=e&id=ENGEUR440352005 (08.10.2014).

[12] Turkey, Armenia to Sign Peace Agreement, CNN, October 10, 2009, http://www.cnn.com/2009/WORLD/europe/10/09/turkey.armenia.peace/index.html (21.08.2016); Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, http://mfa.am/hy/country-by-country/tr/ (20.11.2016).

[13] **Starr S. F., Cornell S.E.(edt.),** The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Oil Window to the West, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program – A Joint Transatlantic Research and Policy Center, Johns Hopkins University, 2005, https://www.silkroadstudies.org/resources/pdf/Monographs/2005_01_MONO_Starr-Cornell_BTC-Pipeline.pdf (17.01.2017).

վերագործարկման մասին Հայաստանի որոշումը[14], որը Թուրքիայի սահմանից 16կմ հեռավորության վրա է գտնվում:[15] 2008թ. Ռուսաստանում հայկական համայնքի անդամների հետ հանդիպման ժամանակ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը աննախադեպ հայտարարություն արեց՝ կոչ անելով Թուրքիայի նախագահին այցելել Հայաստան՝ դիտելու ֆուտբոլի աշխարհի առաջնության Հայաստան-Թուրքիա ընտրական խաղը: Հայաստանն ու Թուրքիան սկսեցին պաշտոնական երկխոսություն՝ հարաբերությունները կարգավորելու նպատակով, ինչը հետագայում կոչվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»:[16]

Հայ և թուրք դիվանագետների միջև ամիսներ շարունակ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դարձել էր տեղական և միջազգային ԶԼՄ-ներում ակտիվ քննարկման առարկա, քանի որ հայ և թուրք պաշտոնյաները խոստովանեցին, որ երկու երկրները երբևէ այդքան մոտ չեն եղել հարաբերությունների կարգավորմանը, որքան այդ ժամանակ:[17] Թուրքիայի արտգործնախարարի խոսքերով, այդ քայլը համընկնում էր կառավարության «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության հետ:[18] Այնուամենայնիվ, շատ հակասություններ կային ինչպես երկրների ներսում, այնպես էլ երկու երկրների սահմաններից դուրս: Դրա պատճառներից մեկն այն էր, որ երկու երկրների պաշտոնյաները կարգավորման գործընթացի վերաբերյալ

---

[14] Թուրքական «Զաման». «Հայաստանի ատոմակայանը պետք է փակվի», Armenpress (Armenian News Agency), 18 հունվար 2010, https://armenpress.am/arm/news/586257/turqakan-zaman-hayastani-atomakayany-petq-e-pakvi.html (20.11.2016).

[15] Nuclear power in Armenia, *World Nuclear Association,* October 2009, http://www.world-nuclear.org/info/inf113.html (03.02.2017).

[16] Armenia-Turkey: The Great Debate, 2009; *European Stability Initiative,* http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=2&slide_ID=1(21.08.2016).

[17] Turkey, Armenia One Step Closer to Open the Border, *Hurriyett Daily News*, September 1, 2009; available from http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkey-armenia-one-step-closer-to-the-border-2009-09-01 (12.04.2015).

[18] Armenia-Turkey: The Great Debate, 2009; *European Stability Initiative,* http://www.esiweb.org/index.php?lang=en&id=322&debate_ID=2&slide_ID=2 (21.08.2016).

հակասական հայտարարություններ էին անում: Մինչ հայկական կողմը խոսում էր առանց նախապայմանների[19] հարաբերությունների հաստատման մասին, թուրք պաշտոնյաները պնդում էին, որ հայ-թուրքական սահմանը կարող է բացվել միայն այն բանից հետո, երբ «վերականգնվի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» և հայերը հրաժարվեն «խեղաթյուրել պատմությունը»:[20]

2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում նախաստորագրվեցին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին երկու արձանագրությունները: Թեև արձանագրությունների տեքստերը ոչ մի դրույթ չէին պարունակում Լեռնային Ղարաբաղի հակամարտության և Ցեղասպանության ճանաչման մասին, արձանագրությունների ստորագրումը ձգձգվեց, քանի որ վերջին պահին, արտաքին գործերի նախարարները պետք է հանդես գային համատեղ հայտարարությամբ: Արարողությանը ներկա ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը և այլ դիվանագետներ անմիջապես գործի անցան ճգնաժամը մեղմելու համար, և երեք ժամ ուշացումով արձանագրությունները վերջնակա-նապես ստորագրվեցին՝ առանց հայտարարությունների:[21] Սակայն իրավական ուժ ստանալու համար անհրաժեշտ էր, որպեսզի դրանք վավերացվեին ազգային խորհրդարաններում, ինչն այդպես էլ տեղի չունեցավ:

Կարծիք կար, որ եթե Թուրքիան և Հայաստանը վավերացնեին արձանագրությունները, Հարավային Կովկասի աշխարհաքաղա-քական պատկերն այլ տեսք կունենար: Սակայն այսօր վերլուծա-բանների մեծամասնությունը կասկածի տակ է դնում նման զարգացումների հնարավորությունը: Այդ ժամանակահատվածում Թուրքիայի վարչապետը շարունակում էր մնալ այն համոզմունքին, որ «եթե ուզում եք լուծել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը,

---

[19] Interview of the President of Armenia Serzh Sargsyan to BBC correspondent Gabriel Gatehouse, August 31, 2009, http://www.president.am/events/press/eng/?id=33 (22.08.2016).

[20] Turkey not to Open Armenia Border until Azerbaijan's Integrity Restored, *The Hurriyett Daily News,* December 4, 2008, http://www.hurriyet.com.tr/english/world/10506578.asp (12.04.2015).

[21] **Landler M., Arsu S.,** After Hitch, Turkey and Armenia Normalize Ties, *The New York Times,* October 10, 2009, http://www.nytimes.com/2009/10/11/world/europe/11armenia.html (21.08.2016).

ապա պետք է նաև լուծեք թուրք-հայկական հարցը: Հակառակ դեպքում դուք չեք կարողանա լուծել այն»:[22]

Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի նախօրեին՝ 2010թ. ապրիլի 22-ին, Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվող ուղերձում նախագահ Սարգսյանը հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ չէ առաջ գնալ առանց նախապայմանների և, որ ողջամիտ ժամկետներում հայ ժողովրդի շահերից է բխում արձանագրությունների վավերացման կասեցումը, սակայն հարաբերությունների կարգավորումը մնում է Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում:[23] Այլ կերպ ասած, ստատուս քվոն մինչ օրս Ցյուրիխյան արձանագությունների միակ արդյունքն է: Դա ենթադրում է մի իրավիճակ, երբ արձանագրությունները չեն վավերացվում, դիվանագիտական հարաբերությունները մնում են չհաստատված, իսկ ընդհանուր սահմանը մնում է փակ: Այս պայմաններում, ինչպես Հայաստանին և Թուրքիային, այնպես էլ գործընթացի միջնորդներին պետք է արդյունավետ ելք փնտրել իրավիճակից: Թեև քիչ ժամանակ չի անցել, սակայն դժվար է պնդել, որ որևէ ողջամիտ հնարավորություն է ներկայացվել: Մինչդեռ բիզնեսը կարող է լուրջ խթան հանդիսանալ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար:

1991թ. մի խումբ սփյուռքահայ գործիչներ և թուրք գործարար Իշաք Ալաթոնը առաջին անգամ փորձեցին տնտեսական համագործակցությունն օգտագործել հարաբերությունների կարգավորման նպատակով և Թուրքիայի Տրապիզոն նավահանգիստը կապել Երևանի հետ՝ մատակարարման նոր ուղի բացելու նպատակով:[24] Թեև այդ

---

[22] Turkish PM Erdogan makes a condition to White House in terms of resolution of Turkish-Armenian issue, ANS TV, *Today.az*, 04.12.2009, http://www.today.az/news/politics/57954.html (21.08.2016).

[23] **Serzh Sargsyan,** Televised Address of April 22, Yerevan, Armenia, (in Armenian) https://www.azatutyun.am/a/2021548.html (21.08.2016).

[24] Չնայած պաշտոնական քաղաքական աջակցությանը, Անկարայի վարչակազմի և մեդիայի ազգայնական շրջանակները շատ արագ տապալեցին նախագիծը: «Առաջնորդները հանդիպել են բոլորիս, հավանության են արժանացրել նախագիծը, այնուհետև երկյուղելով լրատվամիջոցներից, ստելով դրա մասին .... միայն մեկ օրում, 1992թ. փետրվարի 29-ին տասներեք օրաթերթ և 27 հոդված պախարակել են ինձ.

նախագիծը հաջողություն չունեցավ[25], թուրք և հայ գործարարները գտան այլընտրանքային ճանապարհներ՝ առևտուր անելով Վրաստանի և Իրանի միջոցով: Թուրքիա-Հայաստան առևտրի ծավալը արձանագրությունների ստորագրման նախօրեին՝ 2007թ., առնվազն 120 միլիոն դոլարի էր հասել՝ 1997թ. մոտ 30 միլիոն դոլարի դիմաց[26]: Հետազոտության համաձայն, սահմանի բացումը կարող էր այն ավելի քան կրկնապատկել՝ հասնելով մինչև 300 միլիոն դոլար:[27]

Թուրքիայի հետ բաց սահման ունենալը կարող է խթանել Հայաստանում արտասահմանյան ուղղակի ներդրումները՝ նվազեցնելով մեկուսացվածության և ռիսկայնության ընկալումը:[28] Գոյություն ունեցող և պլանավորված նոր էլեկտրական կայանների արտադրած

Դա այսօր տեղի չէր ունենա»: Ճգնաժամային խմբի հարցազրույցը Ի. Ալաթոնի հետ, Ստամբուլ, փետրվարի 25, 2009թ.:

[25] Ճգնաժամային խմբի հարցազրույցը, պաշտոնական Հայաստան, Նյու Յորք, փետրվար 2009. Արժույթի միջազգային հիմնադրամը երկկողմ առևտրի չափը 2005թ. համար գնահատել է բավական ցածր՝ 54 միլիոն եվրո (65 միլիոն դոլար), որից 96 տոկոսը Թուքիայից արտահանումն է Հայաստան:

[26] **Soyak K.**, Թուրք-հայկական ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ (Turkish Armenian Business Development Council (TABDC)), հարցազրույցը, *Today's Zaman,* 16 փետրվար, 2009.

[27] Բրյուսելում տեղակայված «Unit Group» թուրքական ընկերությունը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել Հայաստանից էլեկտրաէներգիայի գնելու վերաբերյալ՝ նախագահ Գյուլի Հայաստան այցի ժամանակ: Չնայած հայտնի չէ, թե երբ դա տեղի կունենա՝ հաշվի առնելով քաղաքական խնդիրների առկայությունն ու թույլտվությունների և տեխնիկական պայմանավորվածությունների ձեռք բերման անհրաժեշտությունը: Ճգնաժամային խմբի հեռախոսային հարցազրույցը «Unit Group»-ի պաշտոնյայի հետ, Ստամբուլ, 20 մարտի 2009: Հայաստանի Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը նշել է, որ ինքն ակնկալում է տարեկան 1.5 մլրդ կվտ/ժամ էլեկտրականության վաճառքը սկսել «որքան հնարավոր է արագ», Armenia Report, *Radio Free Europe/Radio Liberty(REF/RL),* 20 մարտի, 2009թ.:

[28] «1999-2005թթ. ընթացքում Հայաստանն ունեցել է արտաքին վտանգների ամենաբարձր վարկանիշներից մեկը ... աշխարհի ամենավտանգավոր երկրների 10 տոկոսում», ըստ **Banaian K., Roberts B.,** The Impacts of Conflict Risk Reduction on the Armenian Economy, *The Economic and Social Consequences of Opening the Armenian-Turkey Border,* Yerevan, 2007.

էլեկտրաէներգիայի համար Հայաստանը կարող էր արևելյան Թուրքիայում պատրաստի շուկա գտնել: Թուրքիային էլեկտրա-էներգիայի վաճառքը սկզբունքորեն համաձայնեցված էր նախագահ Գյուլի Հայաստան այցի ժամանակ: Ենթադրվում էր, որ Հայաստանից արտահանումը կարող էր աճել 18-50 տոկոսի սահմաններում,[29] ինչի արդյունքում արդյունաբերական ապրանքներն ավելի մրցունակ կլինեին: Ըստ հաշվարկների, միջին ժամկետում կարող էր ստեղծվել 4800 նոր աշխատատեղ,[30] ՀՆԱ-ն կավելանար 2,7 տոկոսով, իսկ շահույթը՝ 1,8 տոկոսով:[31]

Ըստ Ռուբեն Շուգարյանի, հայ-թուրքական սահմանի բացման փոխադարձ տնտեսական օգուտը կասկածից վեր է: «Ենթադրվում էր, որ Եվրասիական միությանը անդամակցելը կարող էր փոխել իրավիճակը, սակայն կապի և երթուղիների բացակայությունը և չլուծված տարածաշրջանային հակամարտությունները թույլ չեն տալիս հասնել շոշափելի արդյունքների: Մեկ այլ հարևանի՝ Իրանի հետ Հայաստանը չունի քաղաքական խնդիրներ, սակայն մաքսային տուրքերն ու վճարներն այս երկրում բավական բարձր են, Իրանը դեռևս տուժում է տնտեսական պատժամիջոցների հետևանքներից և միջազգային մեկուսացումից:[32] Սա է պատճառը, որ թուրքական շուկա մուտք գործելը կարող է մեծապես բարելավել Հայաստանի ներդրումա-յին վարկանիշը, որը ներկայումս բավական ցածր է՝ արտաքին առևտրի բարդություններով պայմանավորված:»[33]

Ըստ հայ-թուրքական գործարարության զարգացման խորհրդի (TABDC) համանախագահ Քաան Սոյակի, կան բազմաթիվ ծրագրեր,

---

[29] **Jrbashyan T., et al,** Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Turkish-Armenian Borders. Implications for External Trade Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC), Yerevan, Armenia, 2005.

[30] **Gültekin B.**, The Stakes of Opening the Turkish Armenian Border", French Institute of Anatolian Studies, Research Program on Turkey-Caucasus, October 2002.

[31] **Jrbashyan T., et al,** նշվ. աշխ.:

[32] **Shougarian R.,** The Armenian-Turkish Limbo, International Mediation and the Fragmented Identity of a Security-Conscious Region Does Armenia Need a Foreign Policy? Rouben Shougarian, Gomidas Institute London, 2016, p.145.

[33] **Khachatrian H.,** Economic Impacts of Re-Opening the ArmenianTurkish Border, May 13, 2009, http://www.tr.boell.org/web/50- 788.html (14.05. 2016).

որոնք կարող են նախաձեռնվել հայ և թուրք գործարար համայնքների ջանքերով: Այդ նախագծերից մեկը տեքստիլ ոլորտում համագործակցության համար Թուրքիայի և Հայաստանի միջև որակավորված արդյունաբերական գոտու ստեղծումն է: Նախկին Խորհրդային Միությունում Հայաստանը եղել է տեքստիլ արդյունաբերության կենտրոն և դեռևս ակտիվ արտահանող է տեքստիլի բնագավառում:[34] Բացի այդ, ըստ Սոյակի, Հայաստանն ունի շատ արդյունավետ մարքեթինգային ցանց Միացյալ Նահանգներում, որը կարող է աշխատել ինչպես որակավորված արդյունաբերական գոտում, այնպես էլ երկու երկրներում արտադրված ապրանքների համար: «Թուրքիայում մենք ունենք տեխնիկական հնարավորություններ, իսկ Հայաստանում աշխատուժ կա: Հնարավոր է արտադրել որակյալ գործվածքներ և դրանք վաճառել ԱՄՆ-ում՝ առանց հարկերի կամ մաքսատուրքերի»:[35]

ԱՄՆ-ի օրենսդրության միջոցով ՈԱԳ ստեղծելու համար TABDC-ը տարիներ շարունակ աշխատում էր ԱՄՆ կոնգրեսականների հետ: Բանակցությունների նպատակն էր հասնել նրան, որ օրենսդիր մարմնի միջոցով ճնշում գործադրվեր գործադիր մարմնի վրա, ցույց տալու համար, որ հայկական և թուրքական լոբբիստական կազմակերպությունները, ինչպես նաև ԱՄՆ Կոնգրեսը, կողմ են այս նախաձեռնությանը: 2001 թվականից ԱՄՆ-ի Կոնգրեսում Թուրքական քոքասի համանախագահ Ռոբերտ Վեքսլերը և ԱՄՆ Կոնգրեսում հայկական քոքասի համանախագահ Ֆրենկ Փալոնեն հանդիպումներ են անցկացրել: Ընդ որում, Սոյակը պնդում է, որ Հայաստանի հետ որակավորված արդյունաբերական գոտի ունենալը լավ հնարավորություն է թուրք գործարարների համար՝ արտահանումը նաև դեպի Ռուսաստան խթանելու առումով:[36]

Իսրայել-Եգիպտոս և Իսրայել-Հորդանան նախաձեռնությունների փորձը ցույց է տալիս, որ բացի տնտեսական ձեռքբերումներից ՈԱԳ-ները կարող են ծառայել որպես հզոր գործիքներ ինչպես

---

[34] Turkish and Armenian Businessmen Await Normalization of Relations, *Today's Zaman*, February 16, 2009, http://www.todayszaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=167060 (21.08.2016).

[35] Նույն տեղում:

[36] **Soyak K.**, նշվ. աշխ.:

արտաքին քաղաքականության խթանման, այնպես էլ տարածաշրջանում կայուն զարգացում ապահովելու համար:

Շահագրգիռ կողմերի վերլուծություն

Հնարավոր ռիսկերը և օգուտները հաշվարկելու համար սովորաբար իրականացվում է կողմերի շահերի վերլուծություն: Հայաստանի և Թուրքիայի մասնակցությամբ ՈԱԳ-ի ստեղծումը կարող է ազդել հետևյալ շահագրգիռ կողմերի վրա:

1. **Հայաստան:** 1993թ. ի վեր, իր չորս հարևաններից երկուսի կողմից մեկուսացված լինելու պատճառով Հայաստանը պետք է ապավինի Վրաստանին և/կամ Իրանին՝ արտաքին աշխարհի հետ ցամաքային կապ հաստատելու համար: 2008թ. օգոստոսին վրաց-ռուսական հակամարտության ընթացքում Հայաստանը զրկվեց տարանցիկ ուղիներից, մատակարարման շղթան դադարեց գործել՝ ազդելով այնպիսի առանցքային ապրանքատեսակների ներմուծման վրա, ինչպիսիք են բենզինը, հացահատիկը և այլն:

Հայաստանը տուժում է ոչ միայն բեռնափոխադրման բարձր արժեքից, այլև Վրաստանի և Իրանի արտաքին քաղաքական վայրիվերումներից, որոնք առաջացել են ռուս-վրացական հակամարտության, ինչպես նաև ԱՄՆ-Իրան հարաբերությունների վերաբերյալ ամերիկյան վարչակազմի կոշտ դիրքորոշման հետևանքով: Թուրքիայի հետ համաձայնության չգալը նշանակում է, որ Հայաստանը տարածաշրջանային էներգետիկ և տրանսպորտային նախագծերից մեկուսանում է, իսկ Ադրբեջանի տնտեսությունն ու ռազմական բյուջեն, ընդհակառակը, շարունակում են աճել և գերազանցել հայկական կողմի հնարավորությունները: Երկու երկրների կարողությունների միջև աճող տարբերությունը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական գործողությունների ակտիվացման (ինչպես եղավ 2016թ. ապրիլին): Վերջիվերջո, Հայաստանի և Թուրքիայի միջև փակ սահմանը չպետք է դիտարկել որպես երկու հարևան երկրների միջև փակ սահման: Աշխարհաքաղաքական տեսանկյունից փակ հայ-թուրքական սահմանը նշանակում է նաև փակ սահման Հայաստանի և ՆԱՏՕ-ի,

Թուրքիայի և Եվրասիական տնտեսական միության, ինչպես նաև փակ սահման ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի միջև:

2. **Թուրքիա:** Թուրքիան մշտապես ձգտել է առավել մեծ ազդեցություն ունենալ Հարավային Կովկասում: Միաժամանակ, ԵՄ-ին անդամակցելու գործընթացի արագացման համար իշխող «Արդարություն և Զարգացում» կուսակցությունը հայտարարեց հարևան պետությունների հետ հարաբերությունները նոր՝ «զրո խնդիր հարևանների հետ»[37] սկզբունքով կառուցելու մտադրության մասին: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը Թուրքիային հնարավորություն կտար զգալիորեն բարելավել նաև Եվրամիության հետ հարաբերություններում մի շարք հարցերում առկա իրավիճակը՝ ԵՄ անդամակցության ծրագրերի առնչությամբ: Եվրամիությունը պահանջում էր, որ սահմանային հակամարտություններն իր անդամ պետությունների շրջանում վերացվեն, և Եվրամիության որոշ անդամներ ճնշում էին Թուրքիային՝ ճանաչելով Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ, եթե Թուրքիային հաջողվեր հարևանների, մասնավորապես Հայաստանի հետ խնդիրները կարգավորել, ապա Անկարայի դերն ու ազդեցությունը կուժեղանար ամբողջ տարածաշրջանում: Թեև Հայաստանի հետ գործակցությունից քաղաքական նկատառումներն առաջնային են Թուրքիայի համար, սակայն դա նաև կարող է ունենալ որոշ դրական տնտեսական արդյունքներ, որոնք Թուրքիան, ամենայն հավանականությամբ, կարող է ակնկալել Հայաստանի հետ բաց սահմանից, այդ թվում նաև առևտրի ծավալների աճի տեսքով:

Հայաստանի հետ ՈԱԳ-ի ստեղծմամբ Թուրքիան կարող է զարգացնել պետության արևելյան շրջանները, որոնք սահմանակից են Հայաստանին: Այդուհանդերձ, Թուրքիայում կա այն բանի գիտակցումը, որ Հայաստանի հետ սահմանը բացելով Թուրքիան կարող է խնդիրներ ունենալ կարևոր դաշնակից Ադրբեջանի հետ: Հայաստանի հետ ընդհանուր առևտրի ծավալը հազիվ թե տասներորդն է Ադրբեջանի հետ առևտրի ծավալի համեմատ: Ակնհայտ է, որ դա չի

[37] Speech delivered by Consul General of the Republic of Turkey in Melbourne, Australia on the occasion of 86th Anniversary of the Republic of Turkey, Melbourne, 29 October 2009, http://melburn.bk.mfa.gov.tr/ShowSpeech.aspx?ID=152 (21.08.2016).

կարող ազդեցիկ լինել Թուրքիայի համար, որն ունի142 միլիարդ դոլարի արտահանում և 205 միլիարդ դոլարի:[38] Իսկ Երևանի շուկաներն արդեն իսկ հագեցած են թուրքական ապրանքներով՝ Հայաստանում հայտնվելով Վրաստանի և Իրանի տարածքներով: Հետևաբար, Թուրքիայում ոմանք կարծում են, որ սահմանը բացելը միայն իմաստալից է Հարավային Կովկասի ամբողջական տարածաշրջանային տեսանկյունից, այդ թվում՝ Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունների համատեքստում:[39] Այնուամենայնիվ, սահմանի բացումը կխթանի փոքր բիզնեսը և կզարգացնի Կարսի, Իգդիրի, Տրապիզոնի և Էրզրումի նման մեկուսացված արևելյան սահմանամերձ քաղաքների տնտեսությունները, որտեղի թուրք առևտրականները պարբերաբար դժգոհում են Վրաստանի ծանրաբեռնված սահմանակետերից և բարձր տրանսպորտային ծախսերից:[40] Կարսում ավելի քան 100 հազար ստորագրություն է հավաքվել Հայաստանի հետ սահմանի բացմանն աջակցող անձանց կողմից:[41] Կարսում և Իգդիրում համայնքները հատկապես ուզում են վաճառել իրենց արտադրած կաթնամթերքը, մրգերն ու թռչնամիսը:[42] Հնագույն հայկական եկեղեցիները, հին հայկական մայրաքաղաք Անին և այլ պատմամշակութային նշանակության տեսարժան վայրեր կարող են

---

[38] Ադրբեջանի առևտրի ընդհանուր ծավալը կազմում է 39,8 մլրդ դոլար, որից 32,3 մլրդ դոլարը արտահանումն է: Տվյալները վերցված են «World Factbook»-ից, Կենտրոնական Հետախուզական Գործակալություն (Central Intelligence Agency), 2008թ.:

[39] **Laçiner S.,** Türkiye-Ermenistan İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyutu" (The Border Issue in Turkey-Armenia Relations and its Economic Dimension, *Ermenistan Araştırmaları,* no. 6, 2002.

[40] Տրանսպորտը 50 տոկոսով ավելացնում է Հայաստանի տեղական արտադրանքի արժեքը, ինչը սովորական լրացուցիչ ծախսերի ավելի քան կրկնապատիկն է: 1996-ին Տրապիզոնի Ազատ գոտում գտնվող մոտ 30 ձեռնարկություններ բողոք են ներկայացրել Թուրքիայի ԱԳՆ-ին՝ Վրաստանի «ոչ պատշաճ մաքսային վճարումների մասին»: **Gültekin B.,** The Stakes of Opening the Turkish Armenian Border. French Institute of Anatolian Studies, Research Program on Turkey-Caucasus, October 2002.

[41] "Doğukapısı açılsın!", campaign launched in 1996, kent haber.com.

[42] **Kalaycıoğlu S.**, Exploring Complementarities between Turkey and Armenia for Regional Cooperation: Potentials and Challenges, *The Economic and Social Consequences of Opening the Armenian-Turkish Border,* AIPRG, Yerevan, 2007.

.

խթանել զբոսաշրջության աճը ոչ միայն Հայաստանից, այլև սփյուռքից: Այդ ամենից զատ, 2000-ական թվականներին Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգում մնում էր ԵՄ հետ հարաբերությունների խորացումն ու ինտեգրումը: Թուրքիայի վերջնական նպատակն էր անդամակցել ԵՄ-ին և դառնալ եվրոպական ընտանիքի լիիրավ անդամ: Թուրքիայում կար այն ընկալումը, որ եթե Թուրքիան դառնա ԵՄ անդամ, ապա ստիպված է լինելու բացել հայ-թուրքական սահմանն՝ առանց նախապայմանների, և դրա դիմաց որևէ բան ստանալու: Միաժամանակ, այս գոտիների ստեղծմամբ Թուրքիան մի կողմից կարող էր ԵՄ-ին ցույց տալ, որ իրականում սահմանը բաց է և գործում են համատեղ կազմակերպություններ, մյուս կողմից, կարող էր Ադրբեջանին սիրաշահելու նպատակով հայտարարել, որ իրականում հայ-թուրքական սահմանը փակ է: Այսինքն, երբ Թուրքիային անհրաժեշտ է Ադրբեջանին ցույց տալ, որ ինքը շարունակում է Հայաստանի դեմ շրջափակումը, նա դա կարող է անել, քանի որ սահմանները փաստացի փակ են: Իսկ երբ անհրաժեշտ է հայտարարել, որ շրջափակումը արդեն իսկ վերացվում է, ապա Թուրքիան կարող է որակավորված արդյունաբերական գոտիները մատնանշել՝ որպես ապաշրջափակման փաստացի օրինակ: Իսկ եթե հաշվի առնվի, որ հարևան երկրների հետ հարաբերություններում Թուրքիան ոչ միայն չի կարողացել իրացնել իր հռչակած «զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականությունն, այլև չի կրճատել այն հարևանների թիվը[43], որոնց հետ լուրջ խնդիրներ ունի, ապա որակավորված արդյունաբերական գոտիների միջոցով գոնե հարևաններից մեկի հետ հարաբերությունների բարելավումը կարող է վկայել, որ այդ քաղաքականությունը դեռևս չի ձախողվել:

3. **ԱՄՆ-ն՝ որպես գլոբալ գերտերություն:** Տարածաշրջանում ԱՄՆ հիմնական դաշնակից Թուրքիայում բազմիցս լարվածություն է առաջացել ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձևի նախագծի պատճառով: Նախագահ Օբաման իր քարոզարշավի

---

[43] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.,** Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 02, 141-162, http://arjps.org/archive/articles/arm/02_2014/Torosyan-Arshakyan.pdf (21.08.2016).

ժամանակ խոստացել էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը, սակայն 2009թ. ապրիլի 24-ի իր ուղերձում խուսափեց «ցեղասպանություն» բառից, փոխարենն օգտագործելով «Մեծ Եղեռն» բառերը: Օբաման չօգտագործեց «ցեղասպանություն» տերմինը, ապրիլի 24-ի կապակցությամբ հայերի համար արված 8 ուղերձներից և ոչ մեկում: ԱՄՆ-ը քաղաքական օրակարգում մշտապես եղել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Դրա նպատակներից մեկը նաև տարածաշրջանում Ռուսաստանի դերի նվազեցումն է եղել:

Իհարկե, Միացյալ Նահանգների համար ՈԱԳ-ի ստեղծումը կունենա հատկապես քաղաքական և աշխարհաքաղաքական, այլ ոչ՝ տնտեսական նշանակություն, այնուամենայնիվ, Հարավային Կովկասի տարածաշրջանում ԱՄՆ-ի տնտեսական ներկայությունը չի կարելի թերագնահատել: Հարավային Կովկասում Ռուսաստանի տնտեսական շահերը այնքան ուժեղ են, որ որակավորված արդյունաբերական գոտիների ստեղծմամբ ԱՄՆ-ն անհամեմատ ավելի հեշտ կհայտնվի տարածաշրջանում, քան այլ մեթոդներով: Անկախ արձանագրությունների ճակատագրից, ՈԱԳ-ի նախաձեռնությունը կենսունակ տարբերակ է երկու պետությունների համար: Գյումրիում և Կարսում ՈԱԳ-ի ստեղծմամբ ԱՄՆ-ն կարող էր ընդլայնել իր տարածաշրջանային տնտեսական ազդեցությունը և ավելացնել Հայաստանում և Թուրքիայում գործող ՈԱԳ-երի խոշոր բիզնեսների կախվածությունը իրենից: Միևնույն ժամանակ, բարձրորակ տեքստիլ, հագուստ, օրգանական գյուղատնտեսական արտադրանք կամ նույնիսկ բարձր տեխնոլոգիաները կարող են իրենց արժանի տեղը գտնել ԱՄՆ շուկայում:

4. **Ռուսաստանը՝** որպես տարածաշրջանային գերտերություն, և **Վրաստանը՝** որպես տարածաշրջանային տրանզիտի մենաշնորհ ունեցող պետություն: Ռուսաստանը նույնպես կարող էր շահագրգռված լինել Թուրքիա-Հայաստան գործարքով, ինչը կսահմանափակեր Վրաստանի և նրա դաշնակիցների դերն ու նշանակությունը տարածաշրջանում: 2008թ. օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև բախումից հետո հայ-թուրքական սահմանի բացումը կարող էր առավել գրավիչ լինել Մոսկվայի և Անկարայի համար՝ տնտեսության, քաղաքական և անվտանգության նկատառումներից ելնելով: Չնայած

վրացական կառավարությունը պաշտոնապես ողջունել է հայ-թուրքական խաղաղ բանակցությունները, սակայն Վրաստանի կարգավիճակը՝ որպես Հայաստանի տրանսպորտային մոնոպոլիստի, կխաթարվի, եթե սահմանը բացվի և Վրաստանի նշանակությունը որպես կամուրջ էապես կնվազի:

Որպես աշխարհաքաղաքական կարևոր գործարք, հայ-թուրքական համագործակցությունը ներառում է մի քանի այլ շահագրգիռ կողմեր, որոնց հետաքրքրությունները, ընկալումները և դիրքերն, ամենայն հավանականությամբ, կարող են ազդել ինչպես կողմերի վարքագծի, այնպես էլ բանակցային գործընթացի արդյունքի վրա:

5. **Հայկական սփյուռք:** Չնայած տնտեսական և աշխարհաքաղաքական սահմանափակումներին, Հայաստանի տնտեսության անհավասարակշռությունը որոշ չափով մեղմվել է իր խոշոր սփյուռքի հաշվին, որը լայն տարածում ունի ամբողջ աշխարհում: Սփյուռքը Հայաստանի համար միջազգային աջակցության, մարդասիրական օգնության ծրագրերի մշակման, ֆինանսավորման և իրականացման գործում լուրջ գործոն դարձավ: Դրա վառ օրինակներից է «Հայաստան համայակական հիմնադրամը» և տասնյակ այլ մարդասիրական, կրթական, բարեգործական համահայկական կազմակերպություններ: Ավելին, մասնավոր դրամական փոխանցումների և օտարերկրյա ներդրումների մոբիլիզացումը կարևոր նշանակություն ուներ Հայաստանի համար, որի վառ օրինակներից էր «Լինսի» հիմնադրամը: Ընդհանրապես, մշտապես եղել է ընկալում, որ Սփյուռքը Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման ամենակարևոր ռեսուրսներից մեկն է:[44]

Այդուհանդերձ հայկական սփյուռքի մի հատվածի, մասնավորապես, ՀՅԴ-ի տարբեր երկրներում գործող կառույցների կարծիքով հայերը շատ բան չեն ստանում սահմանները բացելով, ընդհակառակը, թուլացնում են իրենց դիրքերը, երբ Ցեղասպանության փաստի

[44] **Minoian V., Freinkman L.,** Diaspora' s Contribution to Armenia's Economic Development: What Drives the First Movers and How their Efforts Could be Scaled Up? Washington DC: The World Bank, http://documents.worldbank.org/curated/en/301351468206660466/pdf/393810AM0Diasporas0contribution01PUBLIC1.pdf (11.07.2016).

վերաբերյալ բանավեճ են բացում: Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը, ամենախոշոր և ամենաազդեցիկ ամերիկահայ կազմակերպություններից մեկը, մտահոգություն էր հայտնել, որ Հայաստանը շրջափակված է Թուրքիայի կողմից և ուժեղ տնտեսական ու դիվանագիտական ճնշման տակ ստիպված է ընդունել այն պայմանները, որոնք սպառնում են իր շահերին, իրավունքներին, անվտանգությանը և ապագային:[45] Պատմական հանձնաժողով ստեղծելու նպատակը Հայ Դատի հանձնաժողովը ներկայացնում է որպես «Անկարայի կողմից երկար տարիներ վարած մարտավարություն՝ Հայոց ցեղասպանության պատմական փաստը կասկածի տակ դնելու համար: Դա նպատակաուղղված է նաև Թուրքիայի կողմից մարդկության դեմ այս հանցագործության միջազգային ճանաչման աճող ալիքը կանխելուն»: Ըստ հայտարարության, արձանագրությունները խաթարում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատությունն ու ինքնորոշման իրավունքը, Հայոց ցեղասպանության արդարացի լուծումը: Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի կողմից Արձանագրությունների վերլուծության արդյունքում հանձնախումը նշում է, որ այն կարծիքին է, թե Հայաստանն իր վրա կիրառվող ճնշումների արդյունքում անում է անխոհեմ և ապակառուցողական զիջումներ:[46]

6. **Ադրբեջանի Հանրապետություն**: Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ Թուրքիան փակեց Հայաստանի հետ սահմանը: 1993թ. Թուրքիան միացավ Ադրբեջանին՝ շրջափակման մեջ դնելով Հայաստանը, փորձելով ստիպել Երևանին՝ հրաժարվելու Լեռնային Ղարաբաղի իշխանություններին ռազմաքաղաքական աջակցություն ցուցաբերելու պրակտիկայից:[47] Միաժամանակ,

---

[45] ANCA Warns Capitol Hill about Dangers of Turkey-Armenia “Protocols”; Alerts Legislators about Pressure on Yerevan to Accept Terms that Threaten Armenia’s Security, Press Release, *Armenian National Committee of America,* https://anca.org/press-release/anca-warns-capitol-hill-about-dangers-of-turkey-armenia-protocols/ (21.01.2017).

[46] Նույն տեղում:

[47] Relations Between Turkey and Armenia, Ministry of Foreign Affairs, Republic of Turkey, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-armenia.en.mfa (20.02.2016), Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, http://mfa.am/hy/country-by-country/tr/ (20.11.2016).

Թուրքիայի կառավարությունը խոստացել էր Ադրբեջանի կառավարությանը, որ սահմանը չի վերաբացվի, մինչև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը չլուծվի և հայկական զորքերը դուրս չգան զբաղեցրած տարածքներից: Ցյուրիխյան Արձանագրություններում հայկական զորքերի դուրս բերումը չի հիշատակվում՝ որպես դիվանագիտական հարաբերությունների հաստատման և սահմանի բացման նախապայման, սակայն պաշտոնական Անկարան բազմիցս պնդել է այդ նախապայմանը:

Ադրբեջանը բազմիցս զգուշացրել է Թուրքիային, որ եթե Երևանի հետ հարաբերությունների բարելավումը տեղի ունենա ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումից առաջ, ապա Ադրբեջանը կընտրի այլընտրանքային էներգետիկ երթուղիներ և կթանկացնի Թուրքիային մատակարարվող գազի գինը, ինչը շուկայականից երեք անգամ էժան է: Ընտրելով Հայաստանի հետ հարաբերությունները չկարգավորելու սցենարը, Թուրքիան վայելելու է Ադրբեջանի հետ եղած «եղբայրության» բոլոր օգուտները, պահպանելով «մեկ ազգ, երկու պետություն» հարաբերությունները: Այդ առումով Թուրքիայի վրա կար որոշակի ճնշում, սակայն Թուրքիան չի կարող թուրք-ադրբեջանական հարաբերությունների գերին լինել, եթե իր ազգային շահերը այլ քայլեր են պարտադրում:

Տարածաշրջանային համագործակցության իրավական գործոնը

ՈԱԳ-ի ստեղծման առաջին և ամենակարևոր քայլը ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումն է: ԱԱՀ-ն կարող է ստորագրվել ինչպես Հայաստանի, այնպես էլ Թուրքիայի և ԱՄՆ-ի, այնպես էլ միայն Հայաստանի կամ միայն Թուրքիայի միջև: Դրանից զատ, կողմերը կարող են օգտագործել Հորդանան-Իսրայել-Եգիպտոս արդեն իսկ գոյություն ունեցող ՈԱԳ-երի համաձայնագրերը՝ որպես նախատիպեր:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ անկախության վերականգնումից կարճ ժամանակ անց Հայաստանը ստորագրեց ԱՄՆ-ի հետ առևտրային հարաբերությունների մասին համաձայնագիր, որով Հայաստանը

ստացավ «Առավել բարենպաստ» (Most Favored Nation)[48] կարգավիճակ, իսկ 2003թ. Հայաստանը դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

ԱՄՆ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքումից հետո կողմերը կարող են ՈԱԳ ստեղծել Գյումրիում և Կարսում: Դա անելու համար Հայաստանի և Թուրքիայի կառավարությունները պետք է ստորագրեն համաձայնագիր ՈԱԳ-ի իրականացման մասին՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.

1. Կարս և Գյումրի քաղաքների միջև սահմանի բացումը (քաղաքների միջև հեռավորությունը՝ մոտ 60կմ է):
2. գոյություն ունեցող Կարս-Գյումրի երկաթուղու համատեղ օգտագործումը:
3. Արդյունաբերական գոտիներում արտադրվող ապրանքների տեսակը:
4. Արտադրանքի տեղափոխման մեթոդները երկու պետությունների տարածքներով:
5. Աշխատուժի տեղափոխման մեթոդները:
6. Աշխատակիցների քաղաքացիության հարցերը:
7. Ներդրումների չափը:
8. Պետություններում բնակվող օտարերկրյա աշխատողների իրավական կարգավիճակը:
9. Առևտրային ներկայացուցչի գրասենյակների բացումը:
10. Համագործակցության հետ կապված այլ հարցերը:
11. Վեճերի լուծման ընդդատությունը ԱՄՆ դատարաններում:
12. Գործընթացը վերահսկող մեխանիզմները:
13. Հայաստանի էներգետիկ և աշխատուժի, ինչպես նաև թուրքական ֆինանսական ներդրումների օգտագործման մանրամասները:

Արդյունավետ որակավորված արդյունաբերական գոտու ստեղծման կարևոր բաղադրիչներից է նաև առողջ բյուրոկրատիան և հարկային քաղաքականությունը: Նորաստեղծ ՈԱԳ-ում թե ազգային, և թե միջազգային ուղղակի ներդրումների հոսքը ՈԱԳ-երի հաջողության

[48] Treaty Between the Republic of Armenia and the United States of America concerning the reciprocal encouragement and protection of investment, Article 2.9, http://armeniaforeignministry.com/doc/conventions/92-16-americainvestprotect-23-09-92-e.pdf (21.08.2016).

և զարգացման բանալին է: Սա այն բացառիկ դեպքերից է, երբ ներդրողը կարիք չունի շուկաներ փնտրելու և ամերկյան շուկան առանց մաքսատուրքերի բաց է բիզնեսի համար: Բարձր հարկերի դրույքաչափերը բացասական միջավայր են ստեղծում պոտենցիալ ներդրումների համար, որոնք փնտրում են «կայուն երկրներում ցածր հարկեր»: Անշուշտ, հարկային արտոնությունները կարող են հանգեցնել բացասական միջավայրի, ինչպիսիք են կոռուպցիան, այլ ընկերությունների նկատմամբ խտրականությունը և կեղծարար գործունեությունը շուկայի մասնակիցների շրջանում, հատկապես զարգացող երկրներում, ինչպիսիք են Հայաստանը և Թուրքիան:

Սակայն կողմերը կարող են համաձայնության գալ ՈԱԳ-երի շրջանակներում հատուկ հարկային բարենպաստ մեխանիզմներ ստեղծելու վերաբերյալ, ինչը կնպաստի տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը: Հատուկ հարկային ռեժիմների տրամադրումը ՈԱԳ-երին չի կարող հանգեցնել բացասական ազդեցության երկու երկրների գործարար միջավայրի վրա:

Կողմերը կարող են նաև համաձայնվել կոնկրետ մեխանիզմի մասին, ինչը կօգնի նրանց ներգրավել ավելի ու ավելի շատ ներդրումներ: Օրինակ, կողմերը կարող են ՈԱԳ-ներում բոլոր ազգային և միջազգային ներդրումներին տալ արտոնություններ, օրինակ, իրենց գործունեության առաջին տարվա ընթացքում, կամ եթե ներդրումը 50 մլն դոլարից ավել է, կամ եթե գործարանը կամ բիզնեսն ունի ավելի քան 3000 աշխատատեղ:

Կարևոր է նաև, որ ՈԱԳ-ներում արտադրված բոլոր ապրանքների համար հարկային և մաքսային ծառայությունների մատչելիությունից զատ երկու երկրների տրանսպորտային համակարգերում նույնպես առավելություններ տրվեն, ինչպիսիք են երկաթուղին, օդանավակայանները, նավահանգիստները և այլն: Այս առումով Գյումրի-Կարս երկաթուղու վերականգնումը և շահագործումը չափազանց կարևոր է: Այս բոլոր հնարավորություններն այսօր չեն հակասում Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո Հայաստանի կողմից ստորագրված համաձայնագրերին:

Եզրակացություն

Թեև Ֆուտբոլային դիվանագիտությունն ուղիղ արդյունքներ չտվեց, սակայն այդ նախաձեռնմամբ Հայաստանն ակտիվ և կառուցողական դերակատարի համբավ վաստակեց բանակցային գործընթացում: Տարածաշրջանում նոր իրողություններ են ձևավորվել: Փոխվել է իրավիճակը Մերձավոր Արևելքում և արաբական աշխարհում: Քաղաքացիական պատերազմը Սիրիայում, Իսլամական Պետության ստեղծումը, Քրդստանի հռչակումը և մի շարք այլ ճգնաժամային իրադարձությունները նոր մարտահրավերներ առաջադրեցին, որոնց աշխարհը, ինչպես նաև Թուրքիան և Հայաստանը պետք է դիմագրավեն: Վերջին տարիներին Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ, իսկ Թուրքիան շեղվել է ժողովրդավարական արժեքներից, փոխել իր ԵՄ անդամ դառնալու առաջնահերթությունը: Երկու երկրների ազգային խորհրդարանների կողմից արձանագրությունները նախաստորագրվելուց հետո այդպես էլ չվավերացվեցին և Հայաստանը դադարեցրեց գործընթացը, քանի որ Թուրքիան չհրաժարվեց նախապայմաններից: Չնայած միջազգային հանրությունն, ընդհանուր առմամբ, ընդունում է, որ հայ-թուրքական արձանագրությունների ձախողումը Թուրքիայի մեղքն է, սակայն այդ փաստը որևէ նշանակություն չունի Հայաստանի համար, քանի որ դեռևս չի բացվել սահմանը և Հայաստանը դեռևս շրջափակման մեջ է Թուրքիայի կողմից: Այս պատճառով, ՈԱԳ-ի հայեցակարգը Հայաստանի համար առանցքային նշանակություն կարող է ունենալ և դրա ստեղծումը հարևան պետությունների համար լավագույն տարբերակն է հարաբերությունների կարգավորումը խթանելու տեսանկյունից: Իսկ գրեթե բոլոր հարևանների, ինչպես նաև ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ լարված հարաբերություններ ունեցող Անկարայի համար չափազանց կարևոր է աշխարհին ցույց տալ, որ իրականում Թուրքիան ժամանակակից պետություն է և ցանկություն ունի բարիդրացիական հարաբերություններ ձևավորել հարևանների հետ: Այս համատեքստում Թուրքիայի համար «հաջողության պատմությունը» չափազանց կարևոր է թե՛ ներքին, և թե՛ արտաքին սպառման համար:

Development in Troubled Neighborhoods: Qualified industrial Zones an Exit Strategy for Armenia and Turkey

SUREN SARGSYAN
Tufts University, the Fletcher School of Law and Diplomacy, USA

The purpose of the article is to study the legal, political and economic aspects of the establishment and development of qualified industrial zones (QIZ) with the participation of Armenia and Turkey. The existence of such special areas that host companies producing goods granted duty-free access to the US markets can promote the development of trade and economy as well as the solution of political problems between participating countries. The article focuses on the experience of US-Jordan-Israel and US-Egypt-Israel QIZs and analyzes whether the cases presented can serve as an effective model for Armenia and Turkey in terms of normalization of bilateral relations through regional economic cooperation.